



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 43

ՀԱՐԱՐ

21 ՅՈՒՆԻՍ 1908

ԱՐԱՋՆԱԿԱՐԳ ԺԱՄԱՑՈՑՆԵՐ

ԶԵՆԻԹ

ԵՂՈՒԿԱԿԱՐԳ ԽՈՒԿՈՂՃՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒՄ

Գ. ՍԱՐԳԻՍՈՅ ԵՒ ԸՆԿ.


Պաշտ-Գարու, Օռոգար-Պաք հաստատութեան դէմ, Թիւ 16

Հատոր 40 փապս

(T. آساوريان) شرکت مکتبه مطبعه — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Այի հաստատութիւն Թիւ 52



Ձեռի, ոտի ու ոտի եւ ձեռի
փանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լու մեքենայ մը ունենալ, որովհետեւ լու
մեքենայ մը անթիւ է անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ աղաւաղի աղբիւր մըն է:

Բոլոր ոչխորս գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԵՍՏԱՆԻ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լուսազոյն է. այն մեքենան ամենէն կառարի լազորեւածը,
կառաւարունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՆԱԲԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱԿԱՆ

ՌԱՐԱ

(1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .

(2. Մեծ փողոց, Կալաթա Աջլաթի Լիւէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

(1. Սինկեր խան, Թիւնէլի հանգը.

(2. Գարաջէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

(1. Սուլթան համաժ.

(2. Սուլթան Ղէյազիա, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԿԻՍԱՐ

(2-րդ Պօյու, թիւ 120 .

Կասարեայ երաժիշտութիւն

Մասնաձեռն գաւառներու բոլոր ֆաբրիկաներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
343 կրկին, Տիւզդոյլաի տանը:



ԱՐՏԻԿԵԼՔ

ՈՐՈՒ

ԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆալսեփան-
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պո-
սոյ համար 80 դր. վեցամսեայ 45 դր. զս-
ւառներու համար տարեկան 108 դր. վեց-
ամսեայ 60 դր. եւ սաար կրկիններու համար
տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ
վաճառում՝ քաղաք փառա: **ԱՐՏԻԿԵԼՔ**
հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խը-
նամեայ ըովանդակութեամբ, ընտիր յօդուած-
ներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղե-
կութիւններով:

ԱՐՏԻԿԵԼՔ, իր վերականգնում խրմ-
բազրութեամբ եւ իր կարող աշխատակիցնե-

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տե-
ղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-
ԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր
ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-
բար: Մանօթ Դէմքեր եւ կրքեմն ալ տեսա-
րաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր ժա-
նազխական յօդուածները, եկեղեցական,
կրօնական, անտեսական-սեղանաւորական,
երկրագործական, իրաւաբանական եւայլն,
բացի գրական, բանասիրական գրուածքնե-
րէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐՏԻԿԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն
ու բաժանորդագրութեանը է ուղղել Տէր Ե
Տնօրէն Դարեգին էֆ. Պոյակեանի հասցէին,
Ղալաթիա, Մահմուտիէ ձառաձեօի, աւր հա-
տառուած են թերթին տպարանն ու խրմ-
բազրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ — ՎԱՋԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 43

ՇԱՐԱԹ.

21 ՅՈՒՆԻՍ 1908



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՖԷՐԻՏ ԷՖ. ԳԱՅՍԷՐԵԱՆ
ՏԷՐ-ՏՆՕՐԷՆ ՄԱՆՁՈՒՄԷ ՕՐԱԹԵՐԹԻՆ ՈՒ ԼՈՅՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻՆ

ԲԱՆԱՍՏԵՂՆ

ՈՒ ԻՐ ԳԵՂՈՆ

ՀԱՐՍԻՆ ԶՈՆ

ՀԱՐՍԻՆ ԵՐԳ

Ի պատիւ, ՄԱՆՁՈՒՄԷԻ ու ԼՈՅՍԻ ՏԵՐ-
ՏԵՐԿԵՆ, Ազնուաւում Գայսերեան Յովնանէս
ԷՅԵՆՏԻ Փետան՝

ԱԶՆՈՒՄՔԱՅԼ ԱԶՆԻՒ ՀԱՐՍԻՆ

Ո՛վ է աղջիկն այդ գեղեցիկ
Գեղեցկաց մէջ ինք մէկ հասիկ .
Շնորհին հագեր, սեր կ'վառի .

Բուրե ծաղիկ վարդավառի :

Աղջիկն է ԱՆ Տան Տանցիկեան,
Ցեղով, ձիւրովն ազնուական,
Անուն ունի, անուն ԱԶՆԻՒ .

Ինքն իր սեռին պարծանք պատիւ :

Պատիւ ու փա՛ռք այն Աղջկան
Ոյր կոյս ձիւրին կրկան քարգման
Աշխարհի ամենայն
Հարկ ու մարկ համայն :

Կոյսն է ԱԶՆԻՒ, կոյս Սուրբ Գիրքին .

Լոյսն, իւրն առաս լապտեր ձեռքին :

Բանա՛յ թող դռներ
Հարսնիքին Տան ՏԵՐ .

Ծա՛փ զարնենք ԿՈՒՍԻՆ .

Ծա՛փ ի միա՛սին :

Ո՛վ է Աղուորն այն մէկ հասիկ,

Նմանեաց մէջ չնաշխարհիկ ,

Իր մայր բոյնէն բռած սասրակ

Կուգայ քառիլ ուրիշ վանդակ :

Պսակն իր գլխին

Օրուան ՄԵՃ-ՈՒՀԻՆ :

Տոնիկ բամբիւ ԱԶՆԻՒՆ է ԱՆ, աղուորներու
Աղուորն ԱԶՆԻՒ .

Հարսի կառքին մէջ ՓԱՌՔ բազմած,
Փայլալծու իւր, բախտն իւր անիւ :

Պատուոյ քափօր Հարսնեւորի նոյս կառա-
ւարն ալ յաղթանակ ,

Ճեղէ ամբոխն հանդիսատես, ու նեղէ ծովն
արծաթալեակ ,

Ոսկեփաղափ իւսկիւսարէն Թաղն ոստանիկ՝
Կեփիկ-Փաշայ ,

Ու Տանձիկեան իր հայր Տունէն Գայսերեանց
Տուն նոր Հարս կ'ուգայ :

Հարսներուն մէջ Հարսն յաւերժաւս ,

Հասակագեղ ու գեղավարս

Աղուորութեան գոգ դիցունի .

Պատկառանքն հայի .

Ժպտի զմայլումն

Այֆերու պատում :

Ու ծաղկաւեռ

Փունջ հերացն հետ,

Թելերն հարսի

Դափնի հոսի

Սնդուս ուսէն ,

Ուղեք մեղէն ,

Ու յուսունկայ

Դեմքին վերայ

Լաչակն հարսի

Շուտան բացուի :

Տա՛նք Հարսին բարեւ ,

Մաղքե՛նք շատ արեւ ,

Մեր ցնծումներն իրեն բնծայ ,

Փետան Հարսով թող միշտ ցնծայ :

Բանա՛նք ճամբայ, Հարսն անցնի՛ թող .

Սիրն իր կուրծքէն թող չելնէ՛ դող :

Մի՛ դողար, Ազնի՛ւ, փայլէ՛ Դուն կերին ,

Զունի նոր Եղեմդ իր ծոց փաթ, կարին ,

Փետադ ալ կերին, կերին Ամուսին ,

Կեանքն իրեն համար չէ անուրջ ոսին ,

Զիրքերուդ գեղովն ինք միշտ սիրակեզ ,

Կուսայ Բու կեանքիդ իր կեանքն ողջակեզ :

Աղուո՛ր աղջիկներ ,

Նո՛ր հարսնցուններ ,

Դուք զարկե՛ք քնար ,

Մենք Զեզ ծափահար :

Փետացո՛ւ Տղաք .

Դռնացե՛ք նուագ .

Նեկսարն անապակ

Թող լեցուի բաժակ :

Բանաստեղծի այս Գիր-Զօնեակ ,

Յիշատակի փառամանեակ ,

Շարած հուռ հուռ հոն մարգարիտ ,

Վառ միտքն, հոգին ու Բու կոյս սիրտ :

Տամ գրիչ Հօր օծիտ

Նոր Հարսի Ժպտի :

Սո՛ւղ քան ամեն ոսկի, գոհար

Անմահ ուրան լեզուն, հանճար ,

Գեղ, ո՛ր Դուստրդ Աղնիւ Տանցիկեան ,

Այլ արդ փայլ, փառք ՆՈ՛ւդ(*) Գայսերեան :

ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

1908 Յունիս 16, Կ. Պոլիս .

(*) ՆՈՒ, հարս բռն է :



ՀԱՐՍԱՆԻՔ

Երկուշաբթի, 16 Յունիս, Կեսիկ-Փառա
Ս. Յովհաննէս Եկեղեցւոյն մէջ կատարուե-
ցաւ պսակադրութեան հանդէսը՝

ԱԶՆ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Ֆ. ԷՖ. ԳԱՅՍԷՐԵԱՆԻ
ԸՆԴ

ԱԶՆ. ԱԶՆԻԻ ՏԱՆՅԻԿԵԱՆԻ

Կննահայրութեամբ փեսին եղբոր՝ փաստաբան
Յարութիւն ԷՖ. Գայսերեանի :

* * *

Ահա ուրախառիթ լուրը՝ որուն մանա-
մասնութիւնները թուելու համար ամբողջ
Հանրագիտակի մէկ թիւը թերեւս չբաւէր :

Մանգուլի-Էֆեսը տպար հայաբերքին
տպար Տէր-Տնօրէնին հարսանեկան հանդէսը
կատարուեցաւ, պէտք է ըսել, այն շուրջ եւ
փայլով՝ որուն նմանը կարելի է տեսնել անգամ
չէ կատարելի տեսնել նոյն իսկ Հայ-Լայն դա-
սակարգին մէջ : Մանգուլի եւ անոր հա-
մակերելի Տէրը սիրողներու երկսեռ բազմու-
թիւն մը եկած գրաւած էին Տանարը, ուր
պատրաստ կը կենային պատկառելի եկեղե-
ցական դասը, եպիսկոպոսէն մինչեւ դպի-
ներն :

Պատեօնակցի պարտականութենէն աւելի,
Պետութեան եւ Ազգին օգտակար եւ տպար
մասնոյ ներկայացուցիչի մը սոյն ուրախառիթ
պսակը շնորհաւորելով հանդերձ, պարտ ան-
ձին կը համարինք ծափահարել Ազն. Յովհան-
նէս Էֆէնիին, իր ընտանեկան բոլոր կազմե-
լու համար իրեն ըրած ազնիւ ընտրութեան
առթիւ, յանձնին շնորհալի Տիկին ԱԶՆԻԻ
ՏԱՆՅԻԿԵԱՆԻ, որ իր բարի եւ օրինակելի
ամէն բարեմասնութիւնները կը բերէ զօդել
իր ամէնէն սիրուած եւ յարգուած ամուսնոյն
հասրնէս ձրբերուն, որով կազմուեցաւ ըն-
տանեկան երջանիկ յարկը :

Ձերմայէս կը խնդակցինք մեր անգուգա-
կան պատեօնակցին երջանկաւէս ամուսնու-
թեան առթիւ եւ կը մաղթենք ի սրէ երկար
եւ անդորր կեանք մը, կեանք մը յաջող եւ
յարատեւ՝ ինչպէս Մանգուլի կը վայելէ :

ՇՔԵՂ ՑԵՐԵԿՈՅԹ

Ի ՆՊԱՍՏ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԵԱՆ

ՄԻԱՑԵԱԼ ԹԱՂԻՑ ՍԿԻՏԱՐԻ

ԲԵՐԱ, ԲԸԹԻ-ՇԱՆԻ ԹԱՏՐՈՆԸ

Կիրակի ցերեկ, 22 Յունիս 1908
Ժամը 7 ին (Ը. Թ.)

ՅԱՅՏԱԳԻՐ

Ա. ՄԱՍ

Բըրի-Շանի պարտեզին անգուգական նուա-
գածուաց խումբը 40 արուեստագէտներէ բաղ-
կացած, եւ հռչակաւոր մայեսթրօ ձեռնարկի
առաջնորդութեամբ, համակ ֆօքսիւմէ, պիսի
նուագեն,

1. — ՄԱՐԵ ՀԱՄԻՏԻԷ
2. — Սեմիոնի՝ Ռօսինի
3. — Թուալիսաբա՝ Վեռնի
4. — Կեյսա՝ ձօնս
5. — Սեռեմաս Էսթանեօլ՝ Մեքոս

Բ. ՄԱՍ

Առաջնակարգ եւ ծանօթ ֆօլիֆ՝ Ամմէս
Ֆեհիմ Էֆէնիի նորակազմ խումբը պիսի
ներկայացնէ՝

ՄԷՍԻԷՍ ՏՈՒՊԼԸՄԱՐ

Քրիզալիս կատակերգութիւն 3 արար

Յոյս մեծ ունինք թէ, ոչ թէ միայն Սկիւ-
սարցիֆ, այլ եւ ուրիշ արուարձաններէ ալ
կըրասէր եւ եկեղեցասէր անձնաւորութիւնք
պիսի փութան սիրայօժար նպաստել Ս. Խաչ
Եկեղեցւոյն, եւ այդու միշտ պայծառ պա-
հել Ս. Տանարը իրեններով :

Չի գացողը կը տուժէ.

ՍԻՆԿԱՐՈՒՐԵՆ ՓԵՍԱՑՈՒ

ՊԱՐՁ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Շար. եւ վերջ)

Մայրերնին՝ վերի պալքոնը, Պիստոս՝ սալօնին պատուհանէն կէս մէջքէն դուրս կախուած, Ագապին՝ փողոցին դրան առջեւ, և էլպիս՝ քովի յոյներուն սեմին վրայ կայնած, Մելքոն աղային վերադարձին կ'սպասէին անհամբեր և սրատարովի:

— Ինչ խապար պիտի բերէր արդեօք:

Ութին քսան մնացած հայրիկը փողոցին անկիւնէն երեւցաւ: Ամէնքը մէկանց ներս վազեցին և ձեռքէն խեցին ծրար թաշկինակը, որուն մէջ մէկ օխայ տանձ կը գտնուէր չօնուխներուն համար առնուած:

Հարցումներու տեղատարափի մէջ խեղդուի բան մը չէր, խաչոր:

Չորսը մէկ բերան, առանց ժամանակ տալու որ ծերուկը իր կօշիկները փոխէ, իրենց հարցումներու շարքը սկսան, քանի՞ տարու կար, իրա՞ւ, շատ գեճկի՞ն էր, վրան գլուխը ինչպէս էր, հետը ծառաներ բերած էր, հոս մարդ կը ճանչնա՞ր, ինչ գործ կընէր, ուրիշ եղբայր ունէ՞ր, մօրու քաւոր էր թէ ածիլուած, գեղեցիկ աղայ կրնա՞ր ըսուիլ, կարգուելու վրայ բնաւ բան մը ըսած չէ՞ր, ինչո՞ւ եկած էր, շատ պիտի կենա՞ր, ասկէ ո՞ւր երթալ էր միտքը, լեզուն ինչպէս էր, արդեօք հոնտեղէն եկողներուն պէս գրաբա՞ւ կը խօսէր, ու ասիկայ և անիկայ, վերջապէս մարդուն հոգին հանեցին:

— Քանի՞ սահաք երեսը տեսայ քի, ատ ամէն պաները գիտնամ, կը կրկնէր Մելքոն աղան, վաղը գիշեր գայ նէ դուք հասկցէք ատոնք:

— Մութխա պիտի գա՞յ, հայրիկ, հարցուց Պիստոս:

— Հա՛ ըսինք եա՛, պատասխանը տուաւ հայրը, տեսակ մը սրտնեղութեամբ:

Սեղանին վրայ, բացի Մելքոն աղայէն ոչ ոք բան մը կրցաւ դնել բերանը: Մինակ էլպիս որ սովորութիւն ունէր աշխարհիս ամենէն լուրջ բաները par dessus la jambe դիտելու, իր լայն սիրտ ու անհոգ բնաւորութեամբը, երկու երեք հատ ֆօֆօրի գըլ-

տօրեց և վրայէն երկու հատ տանձ կերաւ հայրիկին բերածներէն:

— Ան պիտի կարգուի սէյի, զեհեք ես անօթի պիտի մնամ, կը մտածէր ներքնապէս:

Վախնալով որ մի գուցէ գիշերը հիւրեր գան և խանգարեն ընտանեկան այդ confidence, որոշեցին, Ագապին տուած խորհուրդին վրայ, սեղանատունը նստիլ և սպասուհիին պատուիրեցին փողոցին վրայի սենեակին և բակի ճրագները մաքիլ:

Ամուսնական խնդրոյն ի պատիւ, ամէնքն ալ այդ գիշեր իրենց սիրելի և սովորական զբաղումները մէկ կողմ դրին:

Մելքոն աղան որ տարիներէ ի վեր ամէն գիշեր իրարու վրայ քանի մը ձեռք բախիւան կը բանար պէգիկի թուղթերով, ձեռքը անգամ չառաւ բախիքը, Տիկինը որ ձեռք գիշերներ աղջիկներուն համար բուրդէ չալեր կը հիւսէր, ասեղ անգամ չի բռնեց. Պիստոս մէկ կողմ դրաւ լասիի ձեռագործը. էլպիս՝ որ ամիսներէ ի վեր ձեռքին մէջ ունէր Մօնթի-Քրիսթօի հայերէն թարգմանութեան երրորդ հատորը, գիրքը անգամ չի բացաւ և Ագապին, բացառաբար, քանարկին մէկ անկիւնը չի քնանալ ջանաց այդ արտասովոր գիշերուան մէջ:

— Ան չէ ամմա, վաղը ինչ պիտի եփէք, հարցուց յանկարծ Մելքոն աղան, երեսը կնկանը դարձնելով:

— Դուն վաղը առտու տասը մէծիտ ձգէ ինծի տէ, բանի մը մի խառնուիր:

— Ատ հասկցանք, նա՛, հիմակուընէ տամ սէ, ինչ կուզէք նէ ըրէք, ես վեր կելամ կոր, գիշեր բարի:

— Հայրիկ, բան մը կուզե՞ս, հարցուց Պիստոս, հարցում մը որ երբէք կեանքին մէջ չէր ըրած:

— Վա՛յ, ատ ընտո՞ր եղաւ սէ միտքդ ինկաւ:

— Հէլպիք, հայրիկ, այսօր անխքաւ խոնջեցար քի ...:

— Չէ, պան չեմ ուզեր, տուտին սիւրկիւն չի մոռնաք, ներսի կազն ալ անցուցէք: Էլպիս որ այդ միջոցին քանարէին մէկ անկիւնը նետուած թերթի մը վերջին թիւին էջերը կը թղթատէր, զսպանակէ մղուածի պէս, ոտքի ելաւ և խօսքը մօրը ուղղելով:

— Մայրիկ, կուզես նե երթամ քովի Ծօրկին կանչեմ, ան ալաֆրանկա բաները աղէկ գիտեմ, հարցունենք քի ասանկ քրաքեզի մը ինչ կերակուրներ կը հանեն:

— Սանգիմ գէշ խելք չէ, հայտ գնա կանչէ, ամմա կիճե հոն չի փակիս չի կենաս:

— Չէ, չէ, հիմայ կուգամ:

Կէս ժամէն հազիւ կը վերադառնայ փէշն ի վեր բերելով քովի Ծօրկին, որ ալաֆրանկա կայէն այնքան բան կը հասկնար որքան Այստոնի ուղտապանները Շօթէնի մէկ sonateէն:

Մինչեւ կէս գիշեր տեւեց այդ խորհրդաւոր կցութիւնը, որու միջոցին ժամանակ ունեցան պզտիկ մաւուս մըն ալ դարձնելու... քառասուն ֆիթը մէկ մէթալիքի:

Յոյն երիտասարդը մեկնելէն ետքը, նորէն քաղաւածք մը ըրին վաղուան ճաշացուցակին պարունակութեան վրայ: Նախ քաբիօքալէ ապուր պիտի հանէին, ձուկ մա-հօնեկ, soimarkunով եփուած վառեակ, փուռը տրուած խոզի պուտ մը, սալաթա, իբրեւ անուշեղէն՝ feshma՝ բանսկաքանեան ալ մէկ-տեղ, յետոյ պտուղ, երեք տեսակ:

— Մամա, սուլիճեկ soyma ալ ընենք, ինչ կըսես, առարկեց Պիստոս:

— Քա աղջիկս, սանգիմ կըլար ամմա, հեմ երկայն գործ, պելի ալ հիչ կերած բա-նք չէ. վազ անցէր:

— Մայրիկ, վրայ բերաւ էլպիս, կերա-կուրէն ետքը ինչ պիտի հանենք, մինչեւ կէս գիշեր, ասանկ պիտի նստինք:

— Ժամը տասին ատենները ընչէլ կը հա-նենք, վրայէն ալ խահվէ մը, եղաւ գնաց:

— Կիճե հայի պաներ, մրմրաց Պիստոս:

— Դու կարգուիս ճե, ալաֆրանկա բա-ներ ըրէ, հայտ, կէս գիշերը անցաւ: Եւ Ագապին արթնցնելով, որ նստած աթոռին վրայ քնացած մնացած էր, ամէնքը մէկանց վեր ելան:

Միւս առտու, Մելքոն աղան չուկայ գա-ցած պահուն, հազար մէկ յանձնարարու-թիւններով բեռնաւորեցին խեղճ մարդուն յիշողութիւնը:

— Եկաքները զրկել չի մոռնաս, պատ-ուիրեց կինը, Եղիայէն ալ անցիր ըսէ քի կէս գիշերին քառացալի մը զրկէ քի մարդը օգէլը տանի:

— Հայրիկ, խալեար իլի ժամպօն առ-նես, հա՛:

— Հարսալը չի մոռնաս:

— Բախի ալ չունինք, գիտցած ըլլաս:

— Թուղթի մը վրայ գրէ, քա Ագապի, խնդրեց հայրը կրտսեր աղջիկէն:

— Մամա, մաեօնէզին համար զէյթին եղ ունինք:

— Աղէկ ըսիր, Մելքոն աղա, մէկ շիշէ զրկէ:

— Եօթին չի մոռնաս մարդուն երթալու, պատուիրեց Պիստոս:

Մարդը թուղթի կտորը գրպանը կը դնէ և կը մեկնի:

Փողոցին անկիւնը հազիւ դարձած էր, սպասուհին ետեւէն վազցուցին ըսել տալու համար թէ գիշերուան համար գինի ալ պէտք էր:

Մինչեւ կէս օր մըլիւնի աշխատութիւն մը տիրեց տանը մէջ: Ամէնէն առաջ բակը և դրան մարմարեայ սեմը լուալ տուին, էլպիս ընդունելութեան սրահին վարագոյրները թո-թուեց, խոշոր հայելիին փոշիները վար ա-ռաւ, լաւ մը սրբեց բոլոր կարասիները, գոր-գը սրխը սրխը աւելեց, քօնսօլին վրայի լու-սանկարներուն մէջ կարգ կանոն դրաւ, պա-տուհանին ապակիները մաքրեց, լաւբանե-րուն պատրոյգները աչքէ անցուց, մոխրա-մանները և լուցկիին տուփերը պզտիկ շար-ժուն սեղանի մը վրայ տեղաւորեց, և յետոյ անցաւ սեղանատունը: Պահօռ սպասները լուաց, սրբեց, պնակները համրեց, վերէն մաքուր անձեռոցներ վար բերաւ, կաւիճով Բրիստօֆլ պատառաքողները և դանակները շփեց, և քովի տունէն ծաղիկներ և տերեւ-ներ բրցնելու պատրուակը մէջտեղ դնելով, դրացիներուն գնաց և ժամէ մ'աւելի անհե-տացաւ:

Ներսը խոհանոցին մէջ մայրը և Պիստոս կերակուրներու պատրաստութեամբ զբաղե-ցան մինչեւ ժամը մէկ:

Միջոց մը Ագապին խոհանոցին դրան մօ-տեցաւ և ողորմուկ շեշտով մը մօրը հարցուց:

— Մամա, փորս անթի է, կերակուր չի՞ պիտի ուտենք:

— Նա, ադ տեղ քօքօի կտոր մը կայ, շնթըրկէ կեր:

Ժամը չորսին գրեթէ ամէն բան կազմ ու պատրաստ էր:

Երբ սեղանին հոգերը աւարտեցան, աղջիկները իրենց արդուզարդի գործերով սկսան զբաղիլ: Պիստոս գլուխը լուաց և էլպիս կօշիկներուն փրթած երեք կոճակները կտրեց: Երեք աղջիկները միասին սեղանը յարգարեցին, վերջին աղջիկը մը նետեցին տանը չորս կողմը և մութնալու վրայ էր, երբ վեր ելան հագուելու:

Պիստոս և էլպիս, միաձայն հաւանութեամբ որոշեցին ճերմակ սեւ թեթեւին հագնիլ և վրայէն նոր պլուզներ, Պիստոս երկնագոյն պլուզը պիտի հագնէր և էլպիս ճեւոթոք:

— Խաթ ըրի տէ գլուխս լուացի, կը կրկնէր Պիստոս, նա՛, չի բռներ կոր, կը կրկնէր եօթներորդ անգամ ըլլալով մազերը քակելու և շտկելու պահուն:

— Մամա՛, պոռաց էլպիս վերէն մօրը, որ դեռ վարը սպասուհիին հրամաններ տալու վրայ էր. մամա՛, մալի քարով մատնիդ ես հագնիմ:

— Չէ, անկալ թող Պիստոսը հագնի, գուն պիլեգիկս գիր:

Ժամը վեցը հազիւ կար երբ քուսէթներն ընկնուցին աղջիկները և իրենց ննջասենեակին պատուհանին մօտենալով սկսան եղունգներն մաքրել: Այս գործն ալ աւարտելէն ետքը, վերջին անգամ հայելին մէջ դիտեցին իրենք զիրենք և վար չիջած մէկ քանի կաթիլ քսուեցան violette de parmesի սրուակէն:

Փողոցին դուռը կէս մը բաց, բակին մէջ balancoirներու վրայ բռուած, պարոն Մաքլումի գալստեան սպասեցին:

Ամէն անգամ որ կառքի մը մօտենալուն ձայնը կը լսէին հեռուէն, ամէնքը մէկանց ոտքի կելլէին և

— Նա՛, անոնք են, կ'ըսէին իրարու: Բայց, աւա՛ղ, կառքերը կանցնէին իրարու ետեւ, առանց իրենց դրան առջեւ կայնելու:

Ութ անգամ ասանկ իրենց սիրտը թունդ ելաւ, իններորդին եղիային մէկ faurogախիկ կանգ առաւ իրենց առջեւ:

Ամէնքը մէկանց բակին խորը քաշուեցան, ձեռքերն չփելով:

Պիստոսին համար ահաւոր էր վայրկեանը:

Սիրտը կը զարնէր, թեւէն՝ կապարէ հարուած մը ստացող արտոյտի մը պէս: Պզտիկ սարսուռ մը եկաւ վրան, սրունքներուն կքիլը զգաց, այտերը շառագունեցան, թուրք կոկորդին մէջ ծանրացաւ, և ինքզինքը զսպելու համար մինչեւ անոնց ներս մտնալը, սկըսաւ եղունգները կրծել:

Էլպիս, անփոյթ կերպով, հպարտ շարժուածքով, ժպիտ մը չընկերուն վրայ, դիմաւորեց հիւրը և առաջնորդեց զայն դէպի սրահ: Ետեւէն մայրը ներս մտաւ, և յետոյ Պիստոս:

Մեկքոն աղան չիտակ խոհանոց գացած էր, անձամբ վերահասու ըլլալու համար եղած պատրաստութեանց:

Քանի մը banal ձեւակերպութիւններէ ետքը Պ. Մաքլում խօսքը. Տիկին Փէհրիդեանի ուղղելով ըսաւ.

— Ձեր երկիրը հմայիչ է, Տիկին, հազիւ երկու օրէ ի վեր հոս եմ, և արդէն չգիտեմ ինչպէս, մեծ համակրութիւն մը կզգամ ձեր քաղքին և անոր բնակիչներուն հանդէպ: Թերեւս Ս. Ղազար, ուր ուսմունքս առած եմ, այդ դշտոյ կղզին, և Բրիտանական ոստանը, մեծափարթամն Լօնտոն, նոյն իսկ մեր գեղանին կալկաթայ չեն ազդած վրասայն դիւթիչ աղդեցութիւնը զոր ձեր քարափը ինձ կը մատակարարէ, Արեւմուտքը իր գեղարուեստական նրբութիւնը կը միացնէ Արեւելքի բնական ճոխութեան և կուտայ ձեր բնակավայրին հիասքանչ գեղեցկութիւն մը, որուն վրայ ոչ ոք կրնայ գաղափար կազմել, եթէ գոնէ անգամ մը չէ այցելած Յոնիական այս գեղատեսիլ ափունքը, չէ՛, Տիկին:

— Հելպիս:

— Դովաբանութիւն մը չէ որ կը շուայլեմ. այլ կը խոստովանիմ իրողութիւնը այնպէս ինչպէս որ է:

— Ծնորհակալ եմ:

— Ի վաղո՛ւց անտի հոս հաստատուած էք, Տիկին:

— Այո՛, տունը մերն է:

— Խիստ բարի, օրիորդները պատահութիւն ունեցած են ճամբորդելու, հարցուց Պ. Մաքլում Պիստոսին:

— Չէ՛:

Տարազներու ալլափոխութիւնը, բարբերու նմոյշները, այս ամէնը, շատ կը սիրեմ, որովհետեւ մարդ կը սորվի, կ'ըզօսուի և կը հրճուի:

Այդ մենախօսութեան ոչ ոք կը պատասխանէ:

— Հոս մեր հայահիները եւրոպական լեզուներ կ'խօսին, տիկին:

— Դպրոց գացողները քիչ շատ կը խօսին: Աղջիկներս որ Ամերիկեան դպրոցը գացած են, քիչ շատ անխիբերէն կը խօսին:

Պարոն Մաքլում Օր. Պիստոսի կը դառնայ և զո՛ւտ տնգլիական չեշտով մը կը հարցնէ.

— Where did you pick up your English?

— A little.!

Oah! կը բացազանչէ Սինկափուրցին աղջկան տգիտութիւնը տեսնելով:

Պիստոսի դէմքը կաս կարմիր կը կտրի, այն կարմիրներէն զոր թօշատորները կը գործածեն ցուլերը զգաստացնելու համար:

— Դիտէ՛ք ինչ է, Պ. Արզար, մեր աղջիկները կ'ամչնան, բայց կարգուին նէ կը բացուին:

— Բնական է այդ:

— Մեր Բեթրաքին կը ճանչնա՞ք:

— Ինչպէս չէ, անշուշտ փէհրիզեանի համար կըսէք, տիկին:

— Ինչ կընէ կոր:

— Խիստ լաւ, նա իմ լաւագոյն բարեկամն է, որուն կը պարտիմ ձեզ ճանչնալու պատիւը:

— Մէրսի, գալու երթալու բան մը չի կա՞յ:

— Այդ մասին ոչինչ ասած է ինձ, սակայն անշուշտ կը փափաքի իր ծննդավայրը վերստին տեսնել, ուր կարծեմ շատ մը աղազականներ ալ ունի:

— Մեր ընտանիքը մեծ է, արդեօք զաւակ ունեցա՞ւ:

— Ինչպէս չէ, երկու սիրուն մանկիկներ:

— Աղջիկ, տղայ:

— Այո, աղջիկ տղեկներ:

Էլպիս որ այդ խօսակցութեան միջոցին դուրս ելած էր, սեմին վրայ կերեւի և աչք կընէ մօրը: Այս վերջինը ոտքի կելլէ և Պ. Մաքլումի դառնալով՝

— Հրամայե՛ք, կըսէ պաշտօնական ձայնով մը:

Պ. Մաքլում կը ցատկէ տեղէն և անգլիական սովորութիւններու համեմատ թեւը կը ներկայացնէ տիկնոջ:

— Պ. Արզար, մեր ատենը անցած է հիմայ, մէրսի, կուզէ՞ք նէ Պիստոսը առէք:

— Ինչպէս որ կը հաճիք:

Եւ այդ ընդդիմութենէն քիչ մը զգածուած, ակամայ թեւը կառնէ Պիստոսը և կառաջնորդէ սեղանատուն:

Կանխաւ նստուելիք տեղերը որոշուած էին: Սեղանին գլուխը Մեկքոն աղան պիտի նստէր, աջ կողմը Պ. Մաքլում, անոր քովը Պիստոսը, դիմացի կողմը Էլպիսը և Ագապին ու Մեկքոն աղայի ճիշտ դիմացը տիկին Փէհրիզեան:

Պտուղի ժամանակ տիկինը յարմար դատեց հետեւեալ հարցումը ընելու Պ. Մաքլումի:

— Պ. Արզար, է՛յ, դուք ե՛րբ պիտի կարգուիք նայինք:

— Բայց տիկին, արդէն ես երեք տարի է ի վեր ամուսնացած եմ և Աստուած փոքրիկ աղջիկ մը տուած է մեզի:

— Իրա՛ւ կ'ըսէք, հարցուց շանթահարեալ:

— Եթէ կը ներէք ձեզ ներկայացնեմ Տիկին Մաքլում և մեր Բօնին, և թղթապանակին մէջէն երկու լուսանկար դուրս հանելով կուտայ Տիկնոջ, որ հազիւ կրցաւ ակնարկ մը նետելու անոնց վրայ:

Ամէնքը մէկանց իրարու երես նայեցան, Ագապին՝ Էլպիսին ոտքին վրայ կոխեց և Մեկքոն աղան աթոռին վրայ երերաց:

Ժամը 9¹/₂ ին սեղանէն ելան և յուղարկաւորութեան երթալու պէս գլխիկոր նորէն դարձան սրահ:

Տիկինը ոտքը ներս դնելու վրայ էր, Մեկքոն աղան փէշէն կամացուկ մը քաշեց, երկու քայլ անդին գացին և ծերուկը կնոջը ըսաւ.

— Առ sk' նստէ հիմայ, հիջ skիլ իսէ սա Եղիային խապար դրկէ, fawogwa մարogwa չուզեր ...:

Երեկոյթը ինչպէս լմնցաւ չեմ գիտեր, մինակ սա գիտեմ որ միւս օրը Մեկքոն աղան, եղած ծախքերը հանելու համար Մանօլին ծախած հինգ հարիւր բաքէթ ասլան մարքալը և երկու հարիւր բաքէթ Զինուամպին մանածնեբուռն ամէն մէկ բաքէթին գնոյն վերայ քսանական փարայ աւելցուց, երդուի պատուով ընելով որ այս տարուան rēfojwān քիչ ըլլալուն բամպակը վրայ դրած էր:

Ահա ինչպէս Պ. Մաքլումի Սինկաբուրի մէջ գործած մէկ մեղքը՝ Մանուրը քաւած էր Տէնիզլիի մէջ:

Մ Ա Հ ՎԱՂԱՍԵՌԻԿ ՎԱՅԷ ՍԵՄԵՐՃԵԱՆԻ



Մեծ է ցաւը եւ անմխիթար սուգը:

Մահը որչափ բնական պարսակա-
նութիւն, բոլորովին արբեր եւ անմո-
ռաց ցաւ կը պատճառէ անոնց՝ որոնք
եւս կանուխ կը կորսնցնեն սիրելի մը,
հոգեհաստ մը: Այդպիսի դառնակսկիծ
սուգը քաթխուեցաւ շաբթուս Ազն.
Լեւոն Էֆ. Սեմերճեան, կորսնցնելով իր
միամօր զաւակը՝ Վահէն, որուն ցաւը
որչափ հայրիկին՝ նոյնքան մըն ալ հա-
մայնին վիճակեցաւ: Յաւեհ ողբացեալ
Վահէկը՝ զաւակն էր այն աղփաստէր
եւ ողորմած հօրը, որ իրեն սկզբունք
բրած է սրբել աղփաքն արցունքը, հազ-
ունցնել մերկը, եւ օգնել անոքին: Սկիւ-
սարի Եհնի մահալէի քաղը իսկապէս
կողբայ սուգը իր բարերարին, որուն
շնորհիւ կը նպաստաւորուէր ամեն Տարի:

Հրեշտակ մըն էր Վահէն եւ հրեշ-
տակներու գնաց խառնուիլ, երկնից
խաւերէն օրհնելու հայրիկին բարեսիրտ
զգացումները, որպէս զի ինչպէս իր
ողբացեալ կողակցին՝ նոյնպէս եւ իր
զաւկին մխիթարութիւնը փնտռէ բարի-
քի եւ աղփաստարութեան մեջ:

Կիրակի ժամը 6 1/2 ին Սկիւսարի Ս. Կարապէտ եկեղեցին կատարուեցաւ յուղարկաւորու-
թեան փառասարսուռ արարողութիւնը, նախագահութեամբ Տ. Գրիգորիս Արեւայիսկոպոս
Յովնանէսեանի, իր շուրջը ունենալով՝ Տ. Տ. Մկրտիչ Վեհապետեան, Գեորգ Նրեցեան
Արեւայիսկոպոսները, բազմաթիւ վարդապետներ, Քահանաներ եւ դպիրներ:

Եկեղեցական արարողութիւններէն վերջ՝ Տ. Գեորգ Սրբազան բեմ ելլալով սրտառուչ դամ-
բանական մը խօսեցաւ, ի մխիթարութիւն վեհափառ հօրը եւ պարագաներուն, ուրկէ վերջ
քափորը եկեղեցիէն հանուեցաւ ու բակին մեջ Օր. Մարիոս Պապօսեան յուզիչ շեշտով դամ-
բանական մը արտասանեց, ուրկէ վերջ նոյն հանդիսաւորութեամբ դազաղը առաջնորդուե-
ցաւ տեղւոյն գերեզմանատունը, մարմինը ամփոփուելու համար ընտանեկան դամբարանին մեջ:

Իբր յուղարկաւոր խումբ բազմութիւն մը կը հետեւէր դազաղին, որոնց մեջ կը նմար-
ուէին գլխովին հայ եւ օտարազգի ծանօթ անձնաւորութիւններ, որոնք եկած էին մասնակ-
ցիլ վեցակիր Լեւոն Էֆենցիի անմխիթար սուգին, եւ որոնք իրենց ցաւակցութիւնը յայտնե-
ցին այս փառաւոր առթիւ:

Խմբագրութիւնս իսկապէս զգացուած սոյն դառնակսկիծ կորստեան առթիւ՝ երկնային
մխիթարութիւն կը հայցէ Ազն. Լեւոն Էֆ. Սեմերճեանի եւ իր գերդաստանին:

ԳԵՆԵՐԱԿԻ ՕՒՅԳԻՐԸ

ՋՐՈՋՕՐԸ (ETUDE)

Մարդս զրոգօք չի ծնիր՝ այլ վերջէն զրոգօք կըլայ:

Ջրոգօքը հեռուէն ճանչնալու համար գըլխուն վրայ... աշտարակներ պէտք չէ փընտռել, անիկայ արդէն իր մասնաւոր հովը կը փչէ, ուրկէ ամէն մարդ կրնայ հասկնալ թէ զրոգօքն է ան proprement dit:

Ջրոգօքը բիրեի պէս գեղեցիկ սեռը անհանգիստ կընէ անոնց շուրջը դառնալով, և պէտք է ըսել որ, կիներու է՛ն սիրտ խառնըռուքը համ չառնէր զոգօքէն:

«Պոյէն վեր» խօսքը կարծես զոգօքին համար յղացուած է, այնքան վերէն կը թըռչի ան:

Ջրոգօքին համար իր գրպանը դրամատուն մըն է, գլուխը՝ թանգարան մը, հասակը՝ նոճի, աչքերը՝ մագնիս, սիրտը՝ սիրոյ ւզկէան, հոգին՝ դրախտ:

Ամէն բանէն կը չալէ զոգօքը: Դաշնակ երբ դարնելու ըլլայ, բի՛սթ ըսելդ կուգայ կարծելով թէ՛ կատուն է, որ օգտուելով կափարիչին բաց մնալէն, չորս ոտքերով սխալ մը կընէ կոր: ջութակը երբ ձեռք առնէ, ճիպիցիկին տակը մտնալ կուզես մտեղներէն վախէդ. իսկ մանօյիցը՝ ... տասը հատը զրուշնոցը պատուական կը գտնաս անոր քով եւ սակայն այս երեքը զարկած ատեն մարդ կուզեմ որ իմանայ և դիմանայ իր մարմուռը նայուածքէն ու կարմրուկ այտերէն:

Երբեք պարապ չի մնար զոգօքը. անպատճառ մէկուն քովը պաշտօն մը կուեննայ իբրեւ գրագիր, մրջիւնի մը բեռ հագիւ ըլլալիք ամսականով մը:

Դրպանին դրամը այնքան կը խառնէ մէկու մը դէմ կեցած ու խօսած ժամանակ, որ ձեռքը թոթուելու ըլլաս, սեղանաւորի

մատներուն պէս մուրոտ ըլլալուն՝ կը գանիս բռնելու:

Ջրոգօքը այնքան դրամ կուտայ հագուստին, որչափ չի վճարեր ուտեստին. ցերեկները յատուկ Ֆրանսէականի մը ունի, ուրկէ կերածը ապուխտ է, այս բանն իրենց յատուկ է; սովորութիւն կամ ուխտ է:

Դրպանէն դուրս իյնալու մօտ զետեղած թերթերը կամ Անգլիերէն կըլլան և կամ Դաղիերէն որոց վրայ աչք պտտցնելու համար շոգենաւը մէկիմէ՛ իսկ շոգեկառքին՝ երկրորդ փասը կը բազմի բազմաց մէջ:

Դաղիերէն խօսած ժամանակ, թէեւ ես դուն բան մը չենք հասկնար, սակայն մամածակ bruteներ կըսեն իրարու. «Չուրերու պէս կը խորաթէ կոր ա՛յլ օլսուն...»:

Շարթուան եօթը օրը կիրակի կըմըռնէ զոգօքը, իրեն համար գործը, զբաղումը զբօսանք մըն է, չուկան՝ զբօսավայրը:

Կիրակի առաւօտները ծալքը վրան քօսթիւմը, ինչպէս նաեւ աստրքի քռավաթը կրելով կը վազէ եկեղեցի, ուր մտնելը ելլելը մէկ կըլլայ. իրեն համար եկեղեցին բակն է եւ ժամերգութիւնը դուրսի խօսուրդաւորը. յաւարտ եկեղեցւոյն, շունչը չիտակ վերնատան սանդուխներուն վարը կառնէ, կը կենայ եւ փօփուլ թաշկինակը կսկսի ձօճել, մինչեւ որ կիներէն մին խօսք առնէ. «Ի՛նչ ֆեսիկն լիվանցա է...», այդ օրը իրեն համար նուիրական կը սեպէ:

Ջրոգօքին գրպանէն պակաս չըլլար փնալարօտի պզտիկ մէկ հայելին, ինչպէս նաեւ միմեօն սանտր մը, որոցմով միշտ կը յարդարէ իր թուալէթը, աս ալ իրեն հիլիքը:

Ջրոգօքին բանթալոնը անպատճառ չորս մատ վեր դարձած կըլլայ, ոչ թէ եւրոպացին այնպէս կը հագնի, այլ որովհետեւ Ֆիլսֆօս բուանթէ գուպաները կուզէ ցուցագրել, որոց տակերը ռբոփզի տեղ մնացած չըլլար ապահովաբար եւ քրտինքէն փտտած:

Ձուգօքը, զբօսավայր մը կամ ընտանեկան հաւաքովի մը մէջ իր մասնաւոր նըստուածքը ունի. երկու բթամատները ժլիին անցուցած և աթոռը կոնակի երկու ոտքերուն փրայ բռնած կերերայ եւ կանգ կառնէ ճոճելէ այն ատեն միայն, երբ կռահէ թէ աճապարանքէն մոռցած է կոճակին երկուքը կամ երեքը կոճակել...

Թէեւ ճերմակեղենները մասնաւոր անհոգութեամբ մը երկու շաքաթը անգամ մը կը փոխէ, սակայն ամէն իրինկուն շուկայէն դարձին, առաջին գործը կըլլայ օձիքին մաքուրը դնել. իսկ կիրակիները՝ առտու իրինկուն:

Ձրուգօքին վրայ լաւ գաղափար առնելու համար, զինքը նոր ծանօթացած աղւոր կընկան մը կամ Եիօ օրիորդի մը դէմը տեսնելու է, ահա հոտ է սր զրուգօքը իր քեզը կը պատրաստէ sofpor ևս զիւպպպ հոշակուելու համար:

Ձրուգօքը գիտցած բաներուն մէջ ավուֆաթի պէս կը ճառէ, իմ չգիտցածը երբ ըստիպուի ըսել, հաւու... ի պէս կը մնայ:

Երբեք չէ եղած զրուգօք մը, որ երեկոյթի մէջ տան տիրոջմէն չախ մը չի լսէ, չըսենք վտարուիլը սալօնէն, անիկայ իր մասնաւոր անտանելիութիւններով անպատճառ տեղի կուտայ եւ ուստի և... ամէնէն առաջ կը մեկնի տունէն:

Որ քարը վերցունես սօլունան մը, իսկ ուր որ երթաս անպատճառ զրուգօք մը դէմը կելլայ, ամառ թէ ձմեռ. աշնան թէ գարնան, չորս կողմդ կը վխտան անոնք: Կաթիլ մը ջուրին մէջի միլիոնաւոր միջրոպները այնքան չեն վնասեր մարդուս, որքան մէկ զրուգօք մը՝ չորս հինգ ընտանիքէ բաղկացած սալօնի մը մէջ:

Ձուգօքը աւելի կը նախըտրէ ձիով պըտտիլ բաղամարդ վայրերը քան թէ կառքով, և մեծ հաճոյք կգգայ երբ մէկ քանի վախկոտ կիներ «ամա՛ն, վրաս մի բերեր» պոռան ու բեշերնին կոկելով մէկ քով քաշուին: Ինքը երեսուն երկու ակոսները կը լարէ պատասխանելու համար, ինքզինքին ձօքի հով մը տալով. «ճեվա մայն»:

Ձուգօքը եղանակին յատուկ զբօսավայրերը եւ գեղերը չի փախցնէր, իր շաքաթական պիւտճէին մէջ կիրակիները իրենց յատուկ credit ունին:

Երբ չորս հոգի տեղ մը գտնուին եւ ո եւ է նիւթի մը վրայ վիճաբանին, զրուգօքին ձայնը է՛ն բարձր կելլայ մէջերնին եւ իրաւունքը ան կը շահի:

Բուն զրուգօքը ուսումնասիրելու համար երեկոյթի մէջ հանդիպելու է անոր. Կարի ժամանակ երբ անիկայ հաղար կոտրուտութեանով անկաթէ կընէ կամ ընել կուզէ այն օրիորդը՝ որ երեսին ժպտելու մեղքը գործած է. ալ ան անոր բերնին պատուը կը համարուի են սրտին սիրածը: Mousan so-լապիի խեղճ ձիերը այնքան անգամ քուր չեն ընեք օրուան մէջ, որչափ կը դառնայ մեր զրուգօքը այդ օրիորդին շուրջ՝ մինչեւ որ համը փախցնէ եւ փառաւոր չախ մը ուտէ անոր հայրիկէն կամ եղբորմէն:

Ձուգօքը վիճաբանիլ ալ գիտէ, խելքը հասած չի հասած նիւթերու, խնդիրներու մէջ կը նետուի ու կսկսի լողալ, թեւ ոտք նետել նիւթին մէջ, ուրկէ չի կրնար դուրս ելլալ սակայն: Գիտեմ, տեսայ, կարդացած եմ, կերած եմ, առած եմ, գնած եմ, գըրած եմ, լսած եմ, դործածած եմ, կըսէ այն աեսակ բաներու համար նսնիսկ, որոնք Հրատի մէջ բնակիչ ըլլալուն և չըլլալուն պէս մուծը մնացած խնդիրներ են թերեւս:

Վերջապէս զրուգօքը տեսակ մը քիբ է՝ որ իր ներկայութեամբը ձմեռը Երմիկին մօտ փլուր հազցնել կուտայ, իսկ ամառը ան բլեկ սօլի սքմաի պէս կը դողացնէ մարդը:

Արդ, զրուգօքին վրայօք այսքան խօսելով կը յաւասար թէ մեծ բարիք մը ըրած եղայ Հանգրափսակի երկսեռ ընթերցողներուն, քանի որ անոր մասնաւոր յատկութիւնները կըռահելով ազատած պիտի ըլլաք այն մեծ գլխու ցաւէն, ուրկէ ազատելու համար անքիբիւրին առնելը չի բաւեր այլ՝ քաշուիլ... այն թիբերէն:

ԿՕՊՈՒՍ

ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Տնօրէնութիւնս կը խնդրէ իր այն բաժանորդներէն՝ որոնց հասցէին բաժնեգնի առաքման մասին քանիցս գրուած է, հաճին ընդփոյթ հասցնել դրամները, ապա թէ ոչ՝ պիտի ստիպուինք դադարեցնել թերթերը:

ԲԱՆՁԷՀԻՐ ԵՐԱԶ

[ԾԱՂԻԿ Ի ՔԹԻՆ ՅՕԴՈՒԱԾ]

Կէս գիշեր է:

Sardine à l'huile պէս խիտ իրարու վըրայ տուններէն միոյն երկրորդ յարկին վրայ սենեակի մը մէջ վեօյեօզը փոքր ինչ կը լուսաւորէ չորս դին, մինչ ճիւղնիկին տակ մահճակալին մէջ խոշոր մսեղէն զանգուած մը տենդէ բռնուածի պէս ասդին անդին կը նետուի:

— Էօֆ ... կը խխտուիմ կոր ... մարիմ պիտի ... քէշկէ ես ալ խմող ըլլայի տէ ֆշտայի ... կըսէ կինը որ տաքէն քունը չէր տանէր:

— Էպրո՛ւկ ... բիրէլէնմի՛ն կըլլաս կոր, կը ձայնէ Սիրոս աղան, աչքերը կէս բաց կէս գոց:

— Բաթլամի՛ն պիտի ըլլամ հիմա, արունս խաֆաս կ'ելլայ կոր ...

— Քեզի հազար հեղ ըսի քի, գլոխդ քացախով թրչէ տէյի ... հէմ արունիդ սէրինութի կուտայ, հէմ ալ հոտէն բիրէ թախթապիթի եանաշմի՛ն չըլլար ...

— Հէմ ինծի նայէ Սիրոս աղա՛, անէքի կնիկդ չի կրնար կոր քնանա՛ր նէ, հարկ օրէնք է քի դուն ալ չի ֆշտաս, հայտէ ելիր տէ երկու չիֆթ խօրաթուինք ...

— Կնիկ առտուն խոռողներուն հետ գործի պիտի ելլամ, ձգէ տէ քունս կտրիմ ...

— Չըլլար ըսի՛նք ես ... չօգ չէյ, քիչ մը ալաֆուանկա եղիր ...

— Պէ՛ ճանճ՛, աս գիշերուան ըռահաթ քուններնիս անցունենք տէ պէլքի առտուն ելլամ նէ ալաֆուանկայ կըլլամ ... հիմա ձգէ տէ սոյիս դառնամ ...

— Չըլլար, չըլլար, հասկցա՛ր ... քիչ մը մարդս կնկանը ույմի՛ն կըլլայ ...

— Ծօ՛, քուն ունիմ պէ՛ ... պու նէ՛ միւշ-կիւլ տէրտ տիր Ալլահըմ ... ըսելով կ'ելլայ կը նստի անկողնոյն մէջ:

— Ինծի նայէ Սիրոս աղա, սա խուռտուխաչ հալերնիս կը տեսնաս կո՛ր ես ... աս տաքերուն չաթըի տակ անցունելիք պան չէ...

— Էյ, ատոր խօլայը կայ, վաղը պախճան չատըռ մը խուռմի՛ն ընենք, դուն մաշա չինէ ես ալ կօլօշկայի քիւֆէ հուսեմ, եղաւ դընաց ...

— Սա նայէ՛, իս չինկեանէ ալ ըրիր հա՛...

— Ի՛նչ գիտնամ, ո՛վ տունը տեղը կը ձգէ տէ դուրս կիյնայ ...

— Չիյտեմ ալթըխ, արիֆ օլան աղնար ինչ ըսել կուզեմ կոր նէ ըսելով տիկինը իր ճերմակ մաթինէն հագած բոսպիկ բոսպիկ մահճակալէն վար կիջնայ և կերթայ մոմը կը վառէ, պատուհանն ալ կը բանայ կը նստի:

— Կնիկ այազ է, ել տեղդ պառկէ, ան հիմա քունըդ չի տանիր ամա՛, երկուք մը սաղիդ սօլիդ դառնալու ըլլաս նէ կերթաս...

— Հայտէ՛ հայտէ՛, դուն ալ ելիր տէ եկուր սըտեղը նստէ, լախըռը ունիմ ...

— Էպրո՛ւկ, երկու պօյ կոնակդ քերելու ըլլամ նէ աճապ սընըրներդ կը թուլնան տէ քունըդ կը տանի՛ ...

— Պէտքութի՛ն չունիմ, տահա ատ սըրան չէ տարիքս քի կոնակս քերել տամ, դուն հէլէ եկուր մէյմը ...

— Կնի՛կ, քունը աչքէս կը վազէ կոր, ինսաֆ ըրէ ...

— Ո՞նչ որ կուգամ քունիդ մէջը կտըկ կընեմ տէ տաք տուրուկ կելլաս ...

— Ծօ՛, պու նէ փորձանք տըր Ալլահըմ, քիմէ նէ էթտիք քի պու իշ պաշըմա կէլտի կըսէ ու անկողնէն վար իջնալով կերթայ բազմոցին վրայ կը նստի:

— Հիմա ինծի մտիկ ըրէ Սիրոս աղա, տիրք քի ըսելիքներս իճրա չընե՛ս նէ, ծառքէս աղատելիք չունիս, ըսե՛մ տէ, ետքէն նէ օլտուճա չիգաս ...

— Քա Էպրո՛ւկ ... չելլաս քունիդ մէջը ըլլաս, աճապ երա՛դ կը տեսնաս կոր տէ ես ալ էշու պէս ճուղապ կուտամ կոր ...

— Պառկածէս պէրի աչքս չեմ գոցեր քի երած տեսնամ, ատ քու ֆէսֆէսէդ է, հի-

մաճուկ ինձի մտիկ ըրէ, է՛ն օռթա էսնաֆը պիլէ ամառ մտա՛նք մի, բըռթըն կը ժողվէ եազլըխ կերթայ կոր ...

— Հա՛ ... հասկցա՛յ ... կայնէ աղուոր մը քունս կտրեմ տէ առտուն կը խորաթուխնք, հիմա՛ հասկցայ միտքդ ...

— Չէ՛ չէ՛, տէմիրը տաք տաք կը ծեծեն, ես ըսելիքս ըսեմ քի տիրո առտու որոշումդ տաս ...

Սիրոս աղա խեղճ խեղճ անկողինին կը նայի և ճիտը կը ծռէ:

— Երեսոս նայէ՛, երե՛սս, հիմա իս եազլըխ տանելու խօսք կուտամ կոր ...

— Քա՛ կնի՛կ, մեր տունին տեղին հաւային ուլարը չիգայ, ի՛նչ տէյի օսկիներէ թափթփիմ տէ տէտիրկին ըլլամ ...

Տիկին էպրուկ թեւերը բանալով,

— Սանկ նայէ մէյմը, սա խախուկութիւնը նայէ ...

— Կոցէ ճանրմ, նոր տեսածս չէ, անստորդ ...

— Չէ՛ չէ՛ ... ճիւղէ չեմ ըներ կոր, սա դուրս տուածները նայէ, խապառթ խապառթ եկէր է վուճուտս ... բանա՛մ, կը նայիս ...

— Զահմէթ մընէր, հասկցանք, ատոր խղայը կայ, սիւնկէր մը առնեմ, ամէն օր հորին կլոխը գնայ աղուոր մը չփէ, նայէ ինտոր ֆայտան կը տեսնաս..., աս ալ մասրաֆի բան մը չէ կրնաս ընէր ...

— Ես հիմա տօքթօռի, ըռէչէթայի պէտքութիւն չունիմ, քէնէ իլաճ ալ չեմ ուզէր կոր ... հա՛, մինակ ուզածս կա՛յ նէ, ան ալ եազլըխն է, պաշխա պանի խելքս չի հասնիր, էլ ալէմին կնկանը վրայ կը նայիմ պերնիս ջուրերը կը վազէ կոր, ան պըլըխ պըլըխ միսերնին չե՛մ տեսնար կոր, մուխ մըն է թէփէէս կելլայ կոր ...

— Աղէկ ամա կնիկ, խասապի խանուկ պանալու միտք չունիմ, գէնահաթէս խօչնիդ եմ, ան ալ ձգէ, ես օր մը օրանց, զայիֆ էս, չուպուխ ես տէյի չիքեայէթ մը ըրած ունիմ ... չիտակ ըսէ ...

— Շիքեայէթ ըրած չունիս ամա՛, այնան կը նայիմ կոր նէ, ճիտս քիրազի կոթ է դարձեր ան կը տեսնամ կոր, ան ո՛ւր է պըլըխ պըլըխ կեռտանս քի սանկ կախէի նէ՛ սեւ խատիֆէ եախաս ճէք ճերմակ կը կտրէր քըս-

ուելէն, ճամբան քալած վախտս, անխըտար երկու թառափիս եալքա կուտար խալչաննի՛րս քի ... շատ հեղ անկածիս հասաւ՝ անապ մէջքէն վար սախաթ է ըսելնին ..., հիմա՛ տա մոմը պոնէ տէ եկուր մօտէն սքանտիլ ըրէ հալըս ...

— Կնի՛կ, ինէ պաշխա էրիկ առնելու միտք ունի՛ս ... կը հարցնէ Սիրոս աղան երեթակալով ...

— Չէ՛, Աստուած չընէ ...

— Անանկ է նէ ծանրդ կտրէ տէ պառկէ, ես էրիկդ եմ նէ՛ նէ միսդ կը բնտուեմ նէ տէրիդ ...

— Աղէկ ամա, կտորմընալ կնիկ ըսածդ տէօռլիւ տէօռլիւ ըլլալու ըլլայ նէ էրկանը շանը շէօհրէթն է ...

— Համմէ՛ ...

— Սո՛ւտ եմ ... սանկ քովդ ի վեր քալած ատենս Սիրոսին կնիկը նայեցէք ըսելու ըլլան նէ աժելու է ...

— Իշտէ ա՛տ գործիս չիգար կո՛ր եա՛ ... կնիկ ըսածդ քամբիօն մանտիլ չէ քի սքօռթային մէջը դնեմ տէ էլ ալէմին աշկին դարնել տամ ...

— Զանրմ, նաֆիլէ ի՛նչ սիրտ փոր կը հատցունեմ կոր, ես ասանկ կուզեմ կոր վէսս սէլամ ... և քանի որ քի ես կուզեմ կոր, պիտի ըլլայ ...

Նոյն տտեն գիշերապա՛հը կանցնի պոռալով,

— Եանդուն վա՛ր ... Սառը եարտա եէ՛նի մահալլէտէ՛ ...

— Է՛հ, տեսա՛ր, լսեցի՛ր եա, ջուրը ինկաւ իշտէ, հավէս ըրած տեղըդ կրակ կայ եղէր ...

— Էյ աչկ օլսուն, խօճա Սառը եարին մէջը տուն մը չպիտի դտնանք դահէր ...

— Ես գիտես քի օձէն չեմ վախնար կըրակէն կը վախնամ, կնիկ եկուր վազ եկուր, ասիկայ Աստուծմէ մեզի տույ մըն էր քի եղաւ ...

— Միտիրի վրայ նստիմ նէ երթամ պիտի գէրէ ներօի ճանաւարներս բիթիւն պճըլ պճըլ կուգան կոր... երթամ պիտի, երթամ պիտի ...

— Անէքի գիլէրը թախմիշ ըրիր նէ, տա մոմը մարէ տէ, առտուն տեսնուինք ըսելով

ստքի կեղևայ խեղճ մարդը, կռահելով թէ ազատում չիկայ կնոջը ձեռքէն:

Մոմը կը մարի, այր և կին իրենց տեղերը կը քաշուին, կանդեղը կը պլպլայ, սիվրիսինէկները կսկսին վզրտալ, տիկին էպրուկ, ամուսինէն խօսք առած ըլլալուն՝ իսկոյն կսկսի քնանալ ուրախութեան զենիթը հասած, և այս անգամ ալ Սիոս աղան խոտթլախ կը կտրի: Երկու երեք անգամ ալ ձախ դառնալէն վերջ, տեսնելով որ աչքերը ռուսի մեքսիկի պէս փայտ կտրած են, և թէ իր կէսը անդին ֆըշըր ֆըշըր կը քնանայ, մտմտուքը կառնէ:

— Էօֆ ... բիւֆ ... աս մէռաք՞ ինչ է ես ... քիչ մը առաջ քունը աչքէս կը վազէր կոր ... , չօգ չէյ ... էպրո՞ւկ ... էպրո՞ւկ ... , իշտէ պու, քնացեր է, գործը սըրային դրա՞ւ ես ... , հապա ես, ես ինչո՞ւ չեմ կրնար կոր քնանար ... չօք չէյ ... Ծօ ոտքերնիդ պագնեմ պուտիկ մը քնանա՞մ ... չէ՛, ըլլալիք բան չէ ... քունս չպիտի տանի ... էպրո՞ւկ ... , որի՞ կըսես, առէր տարեր են ... կեցիր նայինք ելլամ սիկառայ մը խմեմ նայիմ նասը կըլլայ, (կեղայ կը կայնի և սիկառ մը սլորելով՝ կսկսի բաց պատուհանին առջեւ խմել): Տուր պագալըմ, սանկ վեր ի վերոյ հիսապ մը ընենք: Հայտէ ըսենք քի տուն մը բռնեցինք, էն ազը տասը ոսկի քիրայ, տասը ըսէ Սիոս, օրը հինգ դըրուշ վաքօռի փարայ, շաքաթը եռեսուն, ամիսը հարիւր քսան, չորս ամիս շնթուկինք նէ՛ չորս հարիւր սէքսէն, կիրտի չըգտը հինգ ոսկի ալ ան ըսէ, եղաւ տասնը հինգ ոսկի, հիչ չերթայ նէ քսան դրուշ կիրակիէ կիրակի ֆանթէզիէ դիր, ամիսը սէքսէն, դուն ըսէ ոսկի մը, չորս ալ ան՝ եղաւ տասնը ինը, դուն ըսէ քսան, (իսկոյն տեղէն կեղայ և գրպանները կը պրպտէ), իշտէ ոսկի մը, կէս ինկիլիդ, երեք մէճիտիյէ տասերկու դրուշ մանտրուք ... քսան ոսկիի երթալո՞ւ ... օլմաթը ... իշտէ հիմա քունս գլուխս ցատկեց, էօֆ ...

Տիկին էպրուկ ամուսնոյն էօֆ բիւֆէրը լսելուն՝ տեղէն կը ցատկէ,

— Ա՛տ ինչ է Սիոսիկ աղա՞ ... սանճի՞ կընես կոր խուշը ...

— Էօֆ ... կը մարիմ կոր ... վրաս սըլաւնդը մը կայ ...

— Եկուր պառկէ ճանըմ, սօլիդ դառցիր նայէ նասը քունդ կը տանի աղուորս, վաղն ալ հէլպէթ գործի պիտի երթաս ...

— Սաղս ալ դառցայ սօլս ալ, չորս հատ ալ թախլա նէտեմ նէ չի պիտի քունս տանի, վրաս կէշուիին եկաւ ...

— Չօգ չէյ, զահէր ինծի պէս եղար, ես ալ քիչ մը առաջ թըպլսըսըն էի ...

— Հա՛ ամա, դուն բանգէհիրը առիր պառկեցար, հիլէթը ինծի պուլաշմիշ եղաւ ...

— Աման Սիոսիկ աղաս, հէլէ մէյժը գըլոխը բարձին դիր նայէ նասը քունդ կը տանի, հայտէ եկուր ...

— Էօֆ ... ներսիդիս կերի կոր գիտեմ՞ քի ... բան մը կըլլամ կոր ...

— Աճապ երկու պոյ կռնակդ քերե՞մ ... պէլքի սընըրնեդ կը թուլնան ...

— Քերելով քեռթելով անցնելու բան չէ, ելիր կտոր մը նստինք տէ խօրաթուինք ...

— Անուշիկ էրիկա, հիմա տահա ելանք սահաթներով խօրաթուեցանք, ալթըն կըտորմընալ պառկինք ...

— Հա՛ ամա, ան վախտը քուկին քունդ փախեր էր, դուն խօրաթեցիր ես մտիկ ըրի, հիմա ալ ելիր տէ ես խօրաթեմ դուն մտիկ ըրէ ...

— Աման իմին աղուոր էրիկա, բէք քունս գլուխս է ...

— Ինչ ֆայտա, մուհապէթ ըսածդ սըրայով է փարայով չէ, եկուր քի ըսելիքներս մտիկ ընես, եղաւ ըլլալիք, սա մոմը վառէ նայիմ ...

Տիկին էպրուկ տանթէլ գիշերնոցը տատանելով կեղայ մոմը կը վառէ և մէկ երկու անգամ յորանջելէ վերջ կանցնի ամուսնոյն դէմը կը նստի:

— Ըսէ նայիմ ինչ է, ինչ եղար, երբոր չէնէ քուն ունիմ կըսէիր կոր ...

— Պառկելուս կիպի, քունս տարաւ, մէկ երկուք մը ֆշտացի, չիյտես քի ինչտար վախթ անցաւ մէյ մըն ալ նայիս քի չարչիթ խանութս չիգայ ...

— Էյ ... , վախնամ երազ տեսար տէ սոսկացիր, զաթը պէքճիին ծանր ինծի ալ սոսկում տուաւ ... էյ, նէ իսէ ետքը, կըսէ տիկին էպրուկ ... կամաց կամաց քունը փախցնել ջանալով ակամայ, ետքը ...

— Կէօյեամ քի առտու է՝ տէ, մաղաղան կը բանամ կոր, մէյ մըն ալ նայիմ քի խոշոր ասմագիլիտիին վրան խոշոր կարմիր մէօհիւր մը ...

— Վո՛ւյ ... խեր ըլլայ ... ետքը ...

— Սանկ կեցայ շաշմիշներ եղայ, կը նայիմ կոր, մէյ մըն ալ նայիս սիւրիւ մը մարդիկ եկան, խանութս բացին, մէջը մտան, պաշլայեցին պոռալ, հառա՛չ, հառա՛չ, մէզաթ մալը, թօփ աթան թիւճարըն մալը, եիւզաէ եէթմիշ էքսիինէ ...

— Է՛յ բէք աղւոր երա՛ղ ... բարին ըլլայ, ան խալապալընը բիւթին միւշտէրիներըդ են քի սուղ գինով կը ծախես կոր տէ խաբըշ խաբըշա կուգան կոր ... Է՛յ ... ետքը ...

— Ետքը Էպրուկս, վախէս մէկ թառափ քաշուած կեցէր էի, նայիս երկու հոգի քովըս եկան պաշլայեցին հետս խօրաթել, նէ ես անոնք կը ճանչնամ նէ ալ անոնք ինծի...

— Է՛յ ... աս տեսիլքի պէս բան մըն է եղէր Սիրոս աղա, գիշերով նախ ընելը աղէկ չէ կըսեն ամա, նէ իսէ, ինծի կուգայ քի կէս գիշերը անցաւ, ֆախաթ, խօռոզի ծան առնելուս կիպի սուս պիտի ըլլաս, բէք կէշ բան է, նայէ ըսեմ ...

— Ետքէն Էպրուկս, ատ մարդիկը ինծի ըսին քի, գիտե՛ս ինչու աս թիւճարին խանութը գոցեցին, մալերը մէզաթ կընեն կոր նէ տէյի, չէ՛, ի՛նչ գիտնամ ըսի, չուզեցի քի ինքզինքս ճանչցունեմ, նայիմ ի՛նչ պիտի ըսեն, մէռաք պո՛ւ եա՛ ...

— Էյ աղէկ ըրիր, կըսէ Էպրուկ, սրունգները քերելով կամաց կամաց, ետքը ...

— Ետքը, իշտէ ըսին քի, աս մարդը վախթին հալը վախտը տեղը, չնորհքով թիւճար մըն էր, տունը տեղը աղւոր աղւոր կը նայէր, պարտք չունէր, կնկանը խօսքին ույմիշ եղաւ, դուռը լան բացաւ, ելաւ կնկանը խօսքովը եազլըխ գնաց, մէկին չորս մասը րաֆ ըրաւ, հոն կնիկը գուլխէ ելաւ, մարդը խախու ըրաւ, կնիկը ճամբան փոխեց, մարդը ինքզինքը իչկիի տուաւ, պարտքի տակ մըտաւ, բիացան պօսօններ հանեց, օրին չի կըրցաւ էօտէմիշ ընելու, անոր համար ասանկ մաղաղան գոցեցին, ինքն ալ չուլ պապան ելաւ ...

— Ամա՛ն ... երազ չէ՞ մի, պօշ բաներ, կարեւորութիւն մի տար, ելի՛ր ելի՛ր, տեղդ պառկէ, երազ ըսածդ միտէի տօլղունութիւն է, աս իրինկուն էնկինառով միսը շատկէկ կերար ան է, կուզես նէ քօնեաք մը տամ միտէտ կը շտկէ աղեկ է ...

— Կայնէ քի լմեցունեմ, ան է քի պաշլայեցի նէ թող տուր քի սօնը բերեմ ... Ըսելով հաղիւ կը պատրաստուի շարունակել, յանկարծ աքլորը կը խօսի՝

— Կու կու լիկ ... կո՛ւ ...

— Քառնաքսի՛ ... պռաք քի պիթիրէիմ... կըսէ Սիրոս աղան ...

— Չէ՛ չէ՛ չըլլար, բէք կէշ բան է, ես քեզի չըսի՞ քի, խօռոզը խօսելուն պէս սուս պիտի ըլլաս տէյի ...

— Իպիկը փսխեմ ... է՛ն ճան ալաճադ քէռթէն եկանք, նասը՛լ սուս ըլլամ ...

— Չէնէ կարծ կապէ Սիրոս աղա, բէք գէշ բան է ...

— Նէ իսէ, ես սէրսէմ սէրսէմ մտմտալնիքէն, ճերմակ մօրուքու տէրտէր մը դէմս տնկուեցաւ ...

— Է՛յ բարի է, բարի, ետքը ...

— Տէրտէրը իս մօրուքին մէջը փաթթեց վեր առաւ, ալանջս ի վար ի՛նչ ըսէ նէ կը հաւնիս ...

— Աման չափուխ ըսէ, դող կելլամ կոր...

— Տղա՛ս, ըսաւ ինծի, աս խանութը քի մէզաթը հանեցին նէ քո՛ւկդ է, հա ըսի, քեզի նորէն անոր տէրը կընեմ ամա, խօսքս մտիկ ընես նէ ըսաւ ...

— Էյ հա՛ ըսէիր ... հա՛ ըսէիր, խօսք կառնէ տիկին Էպրուկ կանացի միամիտ չեշտով մը, և վախէն աչքերը խոշոր խոշոր բացուած։

— Ամա մտիկ պիտի ընե՛ս ըսածս, տէվամ ըրաւ ճերմակ մօրուքու տէրտէրը, էկէր մտիկ չընես նէ՛ դուն ալ կնիկդ ալ մաֆ կըլլաք ...

— Հէմ ալ անանկ է Սիրոս աղա, այս պիչիմը մարդոցը երազին մէջի գուրցածները բէք չիտակ կելլայ, հէմ չընես նէ ալ պէլադ կը գտնաս ... կըսէ տիկինը ծունգի գալով ինքզինքմէն ելած, խօսքդ մտիկ կընեմ ըսի՛ր ...

— Հապա իմզա պիլէ տուի, դո՛ւն ի՛նչ

կը խօրաթեւ կոր ...: Նէ իսէ, ի՞նչ ըսէ, ի՞նչ թէնայի՜ ընէ նէ կը հաւնիս ...

— Ախ ... ի՞նչ ըլլայ նէ ըլլայ, թէն պի՜նը պիտի պոնեմ, հէ՛մ քեզի ալ պոնել պիտի տամ ... չիւնքիւ աս պայազդի պան չէ...

— Իշտէ ըսաւ քի ... դուն աս տարի եազլըն կերթաս կոր եղեր ... էկէր կնկանըդ խօսքին խաբըլմիշ ըլլաս տէ երթալու ըլլա՞ս նէ ... ասկէ պէթէր կըլլաս ... մէյ մը թոթուեց խայիպ եղաւ, ես ալ աչքս բացի ...

Տիկին էպրուկ քար կտրած կը մնայ, մինչ աքլորը երկրորդ անգամ ըլլալով կը խօսի...

— Կու կու լիկ կո՛ւ ...

— Ասկէ ետքը ուզածիդ խըտար էօթմիւշ եղիւր խօսօզս, կուկուկիդ պէս իմ քուռնըս ալ հովին գնաց ... Կըսէ տիկին էպրուկ, ու առանց բառ մը արտասանելու անկողին կը մտնայ, մինչ Սիոս աղա իր կարգին, ոչ թէ մոմը՝ այլ վիյեօզն ալ կը մարէ, և ինքն ալ կը քաշուի անկողին:

Արշալոյսը տակաւ կը ճեղքուի:

ԼԻԼԱ

ԴԱՐԱՍԿԶԻԿ ԲԱՌԱՐԱՆ

Ծ

Ծախել. — Ամէնէն շատ այն ապրանքները քշել կը նայուի, որոնց պայտքը գարշելի ու խորշելի կըլլայ, գորօրինակ՝ միս, ձուկ, հաւկիթ ... աղջիկ etc:

Ծանօթ. — Երրորդ աստիճանի ազգականութիւն, որ առաջին աստիճանէն աւելի սերտ ու սեքք կըլլայ. այս ապրանքէն վարժունիները շատ կուսնան իրենց տեղէ տեղ յարափոփոխ պաշտօնավարութեան բերմունքով:

Ծաղրել. — Ծաղրածին նմանելու փափաք ունեցած ըլլալը յայտնել:

Ծուղակ. — Բան մը՝ որուն շոշափականովը կենդանի կորսան, իսկ աներեւոյթովը մարդ:

Ծեծ. — Կենդանիները կը կրթէ, տղաքը կը լկուտէ, իսկ կիները կը սկրթէ:

Ծով. — Զրեղէն աշխարհ մը, որուն ծոցին մէջ փոթորիկներու ատեն տարին հազարաւոր մարդեր կը մեռնին, իսկ բիւրաւոր ջղագար կիներ կը բուժուին:

Կ

Կեանք. — Ամէնէն շատ արժէքը չը գիտցուած բան մը:

Կաւի. — Բան մը՝ որ թէեւ կօշիկներ մի սկսիւր (որ թարգմանի պաշլամա) ընելու կը ծառայէ, բայց երբեմն ալ ի պահանջել հարկին անով դեմքեր խաբլամա կընեն, ամօթահարութիւն ըսուած ախտէն չը վարակուելու համար:

Կաղապար. — Երբ ձեռնարկած գործիդ վրայ չունիս գաղափար, այն ատեն միայն կրնաս հասկնալ թէ ի՞նչ ըսել է կաղապար:

Կաղամբ. — Տեսակ մը բանջարեղէն՝ որ մարդուս գլխուն նմանութիւնը ունի, և որուն հետ երբեմն կը շփոթուի:

Կարագ. — Հրագարակի վրայ աղէկը քիչ գտնուելուն վար տեսակ քեքեաղիները շատցած են (տե՛ս Բիւրակն առեւտրական թերթ, թիւ 8725, էջ 324, տող 546):

Կակուղ. — Ընդհանրապէս բամպակին ածականը, բայց երբեմն ուրիշ շատ մը բաներու ալ կակուղ կը գործածուի:

Կիճ. — Տկար սեռ ու ամենակարող տարր:

Կեսուր. — Հարսերուն քեքեան, որ կը բորբոքի յաճախ զերթ գեհեան:

Կով. — Օգտակար ու պիտանի կենդանի մը, որուն անունը սակայն «գառնուկ»ին պէս նմանողաբար մարդու չի գործածուիր:

Կուրծք. — (Տե՛ս նաւաստիները ու կիները):

Ի լոյս ածեց

ՌՈՄԱՆՈՍ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Նկատելով որ օդերը տակաւ կը տաքնան եւ կոկորդները կը ցամքին, բեկեառեցի եռածանի խուճերը միածան հաւանականութեամբ Պօղազ իչի չուեցին՝ պօղազին յարդարելու համար: (Անշուշտ փորձերը ծովի պանծոն պիտի կատարուին. Ծ. Լ.):

ԲԵՐԱ. — Անցեալ իրենկուն արեւը մարը չի մտած՝ պարտեզ մտնող շիք միւսիւ մը, հրապուրուելով հոն վիտացող ճերմակ գոգնոցաւոր օստաններէն, իր չաթուա բաթուա յունարէնովը դարպաս ընել փորձած ատեն, երկաթորմին ետեւէն գուազանի հարուած մը կերաւ բալիքարեայի մը կողմանէ: (Կօշկակարն ցկօշիկն օղլում. Ծ. Խ.):

ՍԿԻՒՏԱՐ. Տեղացի օրիորդ մը, որ 35 ձմեռներուն խառ թօփի խաղալու բախուղը՝ ունեցած է, կը փափաքի ամուսնանալ, պայմանաւ որ ամուսնութենէն վերջ մանչուն կողմը իր յարաբերութիւնը գլխովին խզէ եւ տղան գետնէն բուսածի պէս առանձին մնայ իր քով: (Խելացի աղջիկ, կերեւայ. թէ մինչեւ 95 տարիքը պիտի շարունակէ խառթօրին... էրկանը գլխուն իջեցնել. Ծ. Լ.):

ԳՈՒԶԻՈՒՆՃՈՒԹ. — Լուսաւորչայ կիրակին տեղւոյն եկեղեցին իգական սեռը իր բացակայութեամբ կը փայլէր. ինչէ՛ն էր: (Զհասկցա՛ք, աս տաքերուն բուտոան հիշ ֆայտա չըներ. Ծ. Լ.):

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Այս ամառուան նուրոյթը շատ նշանակելի է պէտք է ըսել. խօսխօսաման օրիորդներ ինքզինքնին պէպէք ձեւացնելու համար պէպէ ճերմակ գլխարկներով կը պտտկին կոր. (Մէռաք մընէք, վազն ալ պէշիկով կը պտտին, ինչպէս կողքի... էչէկով. Ծ. Լ.):

ԳԸՆԱԼԸ. — Հոս ցերեկները, նամանաւանդ կիրակիի բազմամարդ կէս օրին, կըղզիէն խռկալու արձագանգ մը լսելի կըլլայ կոր... բազմաձայն եւ բաղաձայն...: (Ինն

ամիս սպասեցէք, ապա կըլլայ... ճղաձայն. Ծ. Լ.):

ՄԱԳՐԻ-ԳԻՒՂ. — Երկուշաբթի Սկիւտարէն հոս այցելութեան եկող երեք կիներ, երբ թռէնին մէջ տեղաւորուելէն վերջ սիկառաները թիւթաւրմիշ ընելով կը ճամբորդէին, օտարուհի մը տեղէն ցատկելով երեքին ալ սիկառաները գետինը նետեր է, մատովը ցոյց տալով վերտառութիւնը ուր գրուած էր՝ «non fumeur»: (Արդեօք կիները ինչ դէմք առին mauvais humeur. Ծ. Լ.):

ԱԼԻՄ-ՏԱՂԻ. — Հոշակաւոր պանդուկ պետ Յովակիմ աղան, շաբթուա Պօլիս իջաւ մէկ քանի եկեղեցիներ ուխտի պտտելու համար, որպէսզի յաճախորդի երես տեսնայ և թէ օգտուի անոնց երեսէն: (Քեզի զրկեմ մէկ քանիներ, բայց ըսեմ թէ աներես են. Ծ. Լ.):

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Դպրոցական արձակուրդները սկսելէն ի վեր, դիւղերու փողոցներէն առանց տուժելու անցնելու անկարելի դարձած է գրեթէ: Սկիւտարէն մեղ կը տեղեկացնեն թէ՛ չարածճի պղտիկ մը տանը պատշգամէն լավըման միջոցաւ օրիորդի մը պոյնիկ գլխարկը թրջեր է: (Արեւին դիր, նէ չարէ, Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Կարգ մը ինքնակոչ քննիչներ, ներկայ քննութեանց օրերուն փոխանակ սըրճարաններու անկիւնը կծկտելու, վարժարանները կերթան ու ինքզինքնուն բանգէտի հովեր տալով կը բազմին կոր: Մասնաւոր քննիչ Յանձնաժողովին ուշադրութիւնը կը հրաւիրենք, որպէս զի այդ կարգի պըլըլը աշակերտներուն ալ մէկ մէկ բան հարցնելով խաղք խայտարակ դուրս հանեն էլասէն:

Արսօնաշէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ծ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ.

Պապը-Ալի հասէսի թիւ 52.

ՄԵԾ 4 ԱՃԱՌԻԱՏՈՒՆ

24775826748

Արանց, Կանխանց եւ Տղայոց
ԳՆՏՔԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ և՛ ՀԱԿ.

4. Գոյիս, Սուրբան Հանամ, Բօփաղեան իսան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանքաց
տոկոսնութեամբ և գինեղութեամբ անմիջեղի
աժանութեամբը չահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վատահոլութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ քնաիր
հագուստներու, կանանց բեղրիներու
և տղայոց շիք և գիմացկուն փոքրիկ-
ներու ճոխ վիթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնախարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նմանե-
րինակ արտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 շրջ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50—38



፲፱፻፳፯

09:30 ԻԵՑԷ՝Բ

ՓՈԽԹԱՑԷՔ ԳՆԵԼ

4. ԵԱՎՐՈՒԵԱՆ

8. ԽՍԺԳՈՒԼԵԱՆԻ

[Zkruy yky hrubf-fb]
suly

Թէ յի մեծ վաճառատուն Թէյերը,
որը ուղղակի ներածութիւն Սեդանէ,
Զինասանէ, Հեղիասանէ, Ճապոնէ եւ Ճա-
ռոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըրձ
նան դոհանալ թէյերու թարմութեամբ
հոտոյն ու համոյր :

Փնտուեցէք մանաւանդ իրենց յայն
առկ խառնուորդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն փարփային :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԼՏԿԵՐԱԶԱՐԴ ԴԱԲԱԹԱՐԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՀՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՅՄՈՒԱՍ

Կ. Պոլսոյ համար տարեկան բաժնեգիրն	50 դր.	Վեցամսեայ 25 դր.
Գաւառաց համար	»	» 27 »
Արսաւանիս	»	» 6 Ֆր.

ኒ ሆ ኔ ቮ ት ኒ

2008

ՊԱՆՈՍ ԳՐԱԴԱՐԱՆ. Գալաթի հայաստանի Առաքելական տպարանի թիվ 52:

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, աշխատանք որ երաշխաւոր մը ցոյց տան թէ միշտ նոր բաժանորդներու անոնինն և հասցէին կցեն նաեւ բաժնեգրինները:

Իրաւները պէտք է զրկուին կամ Օսմ. Մանտաքութով և կամ բաւթայի փուլով 20 հառը
20 զրուչի հաշւով:

ՄԵԾ ԿԱԶՄԱՏՈՒՆ ՀԵՐԵԹԻԿ ՊՕՅԱՃԵԱՆ

Գ. Պոլիս, Պապը-Ալի հասկէսի քիւ 50

Սոյն առաջնակարգ կազմատունը՝ օր
մօտ երեսուն տարուան հաստատութիւն
մըն է, իր գեղեցիկ գործերովը, մաք-
րութեամբը և արագութեամբը արդէն
մեծ համբաւ չահած և գրաւած է վրա-
տահութիւնը ամէն անոնց՝ որոնք փոր-
ձով հաստատած են այս առաւելու-
թիւնները:

Հերթիկ էՖ. Պոյաճեան այս ան-
գամ Եւրոպայէն՝ բերել տուած ըլլալով
արհեստին կատարելագործեալ կարգ մը
մեքենաներ, այսօր ի վիճակի է Գրգիւ
մայրաքաղաքիս բոլոր կազմարարներու
արտադրած գործերուն հետ:

Անգամ մը փորձելը բաւական է:

ԳԱՌՆԻԿ ՔԵԾԻԾԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հանօ-Բուլօ խան իքւ 2

Նախ փորձառունները, յետոյ խաբ-
ուողները միայն զիտեն էթ ո'րչափ
դժուար է, զտնել ու զնել սպրանք-
ներ՝ որոնք թէ տոկուն ըլլան՝ թէ ճա-
շակաւոր և թէ . . . աժան:

Դառնիկ Բէյիչեան վաճառատունը
թօհափիէի էն առաջնակարգ Եւրոպա-
կան գործարաններէն բերել տուած է
տեսակ տիպակ կանանց և արանց յա-
տուկ Ֆանկրաներ, գուլպաներ, քաւիկնակ-
ներ, ձեռնոցներ, փողկապներ, բրդեղեններ,
Ֆիլթիսոն և խիստ ճաշակաւոր ներգնաւապիկ-
ներ, գլխու շարքեր, քաւ ֆոսֆֆօս և լին. և լին.

Ջերմնայէս կը յանձնառենք անգամ
մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ
անպատճառ դոհ մնացողներ միշտ հոն
գիմելով պիտի հաստատեն թէ՛ գինե-
րու աժանութեան, ինչպէ՛ք ազնուութեան և
ապրանաց տկունութեան երեք առաւե-
լութիւնները ուրիշ ո' և է տեղ կարելի
չէ գտնել: